Կազմված է 23 փետրվարի 2018 թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

«23» փետրվարի 2018 Թ.

7-ՐԴ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ՆԱԽԱԳԱՀ՝

______ ԱՆԱՀԻՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ 2 ՕՐԻՆԱԿԻՑ
ՕՐԻՆԱԿ 1

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
13.03.2002թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ՝ **211.150.00659**
ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐ՝
**02561509**

Թիվ 1-3 փոփոխությունը գրանցված է 24.07.2002 թ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
Թիվ 2-3 փոփոխությունը գրանցված է 28.08.2003 թ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
Թիվ 3-3 փոփոխությունը գրանցված է 09.03.2004 թ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
Թիվ 4-2 փոփոխությունը գրանցված է 26.01.2009 թ. իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից
**26.01.2009թ. գրանցված կանոնադրության**
ԹԻՎ 001-3 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ ԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

«23» 03 2018 Թ.

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

**(փոփոխություն)**

**Մարտ 2018**

# Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ

(փոփոխություններով՝ առ 23.02.2018)

## Գլուխ 1

## Ընդհանուր դրույթներ

### Հոդված 1

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը հանդիսանում է միացման ձևով վերակազմակերպված և իրեն միացած պետական հիմնարկների և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպության իրավահաջորդը:

Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը (այսուհետ՝ ճյուղային արհմիություն) իրավաբանական անձանց միություն է, որը միավորում է Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական սպասարկման ոլորտի արհեստակցական կազմակերպությունները և միությունները՝ տվյալ ճյուղի աշխատողների աշխատանքային և դրա հետ կապված մասնագիտական, տնտեսական և սոցիալական իրավունքներն ու շահերը ներկայացնելու և աշխատանքային հարաբերություններում դրանք պաշտպանելու համար:

### Հոդված 2

Ճյուղային արհմիությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, «Արհեստակցական միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

Ճյուղային արհմիությունը անկախ է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններից, քաղաքական, հասարակական և այլ կազմակերպություններից, վերջիններիս հետ իր հարաբերությունները կառուցում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ հավասարության և փոխադարձ հարգանքի հիման վրա:

**Հոդված 3**

Ճյուղային արհմիությունը ինքնուրույն է որոշում իր կառուցվածքը, ընտրում՝ ղեկավար և վերստուգող մարմիններ, հրավիրում՝ համագումարներ, ղեկավար մարմնի նիստեր, ստեղծում՝ աշխատակազմ, որպես կառուցվածքային ստորաբաժանում, կազմակերպում նրա աշխատանքը:

**Հոդված 4**

Ճյուղային արհմիության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, 0010, Վ. Սարգսյան 26/3, Հայաստանի Արհմիությունների Կոնֆեդերացիայի շենք, 501, 502, 503 սենյակներ, հեռ. +374 58-05-82, +374 10 58-05-62:

**Հոդված 5**

Ճյուղային արհմիության հայերեն լրիվ անվանումն է՝

***Հայաստանի պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների և հանրային ծառայությունների աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միություն***

Կրճատ անվանումն է՝ ***«Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիություն» ՃՀՄ***

Անվանման հապավումն է՝ ***ՀՊՀ ՏԻՄ ՀԾ ՃՀՄ***

Ռուսերեն անվանումն է՝ ***Республиканский отраслевой союз профсоюзных организаций работников государственных учреждений, органов местного самоуправления и общественного обслуживания Армении***

Ռուսերեն կրճատ անվանումն է՝ ***РОС «Профсоюз работников госучреждений Армении»***

Ռուսերեն անվանման հապավումն է՝ ***РОС ПРГУА***

Անգլերեն անվանումն է՝ ***Union of state, local government and public service employees of Armenia***

Անգլերեն անվանման հապավումն է՝ ***USLGPSEA***:

## Գլուխ 2

## Ճյուղային արհմիության նպատակները և խնդիրները, գործունեության առարկան և սկզբունքները

**Հոդված 6**

Ճյուղային արհմիության նպատակներն են.

1. Ներկայացնել և պաշտպանել մասնակից (անդամ) կազմակերպությունների շահերը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և դատական մարմիններում, ինչպես նաև արհեստակցական կազմակերպությունների և միությունների մասնակիցների (անդամների) աշխատանքային, մասնագիտական, սոցիալ-տնտեսական իրավունքներն ու շահերը գործատուի և (կամ) երրորդ անձի մոտ:

2. Աշխատողների աշխատանքային, սոցիալ-տնտեսական երաշխիքների պահպանման ու ամրապնդման նպատակով համախմբել մասնակից (անդամ) կազմակերպությունները և միությունները, համակարգել նրանց գործողությունները:

**Հոդված 7**

Ճյուղային արհմիության սկզբունքներն են`

Անկախությունը, կամավորությունը, իրավահավասարությունը, համերաշխությունը, ժողովրդավարությունը, ինքնակառավարումը, հրապարակայնությունը:

**Հոդված 8**

Ճյուղային արհմիության խնդիրներն են.

1. Կնքել ճյուղային կոլեկտիվ պայմանագիր համապատասխան ճյուղի գործատուների միության հետ:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան վերահսկել ոլորտի գործատուների կողմից աշխատանքային օրենսդրության և աշխատանքի պաշտպանության կանոնների պահպանումը:

3. Ապահովել արդյունավետ համագործակցություն Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, արհեստակցական միությունների միջազգային միավորումների և այլ կազմակերպությունների հետ:

4. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մասնակցել աշխատանքային, մասնագիտական, սոցիալ-տնտեսական, իրավական շահերը շոշափող Հայաստանի Հանրապետության օրենքների, օրենսդրական ակտերի և ոլորտին վերաբերող պետական ծրագրերի մշակման և փորձաքննության աշխատանքներին, այլ միջոցառումներին:

5. Առաջարկություններ ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով` աշխատանքային և սոցիալական խնդիրներին առնչվող իրավական նորմատիվ ակտեր ընդունելու, այդ ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու վերաբերյալ:

6. Ճյուղային արհմիության միջոցները ուղղել մասնակից (անդամ) կազմակերպությունների, միությունների աշխատողների դրամական օգնություններին, առողջարանային բուժման և հանգստի, ուսումնա-դաստիարակչական, մարզական և այլ միջոցառումների կազմակերպմանը:

7.Ուսումնասիրել և տարածել մասնակից (անդամ) կազմակերպությունների և միությունների աշխատանքային փորձը, կազմակերպել արհմիութենական ակտիվի ուսուցումը և վերապատրաստումը, ցուցաբերել մեթոդական և գործնական օգնություն մասնակից (անդամ) կազմակերպությունների, միությունների ղեկավար մարմիններին, խրախուսել լավագույն աշխատողներին պատվոգրերով, կրծքանշանով, դրամական օգնությամբ, հուշանվերներով:

**Հոդված 9**

Ճյուղային արհմիության պարտավորություններն են.

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մասնակցել ոլորտին վերաբերող ծրագրերի մշակմանը և դրանց կենսագործմանը:

2. Վարել մասնակից (անդամ) կազմակերպությունների, միությունների հաշվառում:

3. Իր գործունեության մասին պարբերաբար տեղեկացնել մասնակից (անդամ) կազմակերպություններին, միություններին:

## Գլուխ 3

## Ճյուղային արհմիության մասնակցելը (անդամակցելը), ճյուղային արհմիության մասնակից (անդամ) կազմակերպությունների իրավունքներն ու պարտականությունները

**Հոդված 10**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ճյուղային արհմիության մասնակից (անդամ) կարող է լինել պետական հիմնարկների, տեղական ինքնակառավարման մարմինների  և հանրային ծառայությունների ոլորտի, յուրաքանչյուր արհեստակցական կազմակերպություն և /կամ/ արհեստակցական կազմակերպությունների միություն,  որն ընդունում է սույն կանոնադրությունը, ճանաչում և իրականացնում է նրա պահանջները, սույն կանոնադրությամբ սահմանված չափով և ժամկետում մուծում է անդամավճար:

**Հոդված 11**

Ճյուղային արհմիությանը մասնակցելը (անդամակցելը) և մասնակցությունից (անդամությունից) դուրս գալը իրականացվում է արհեստակցական կազմակերպության որոշմամբ:

Ճյուղային արհմիությանը մասնակցելու (անդամակցելու) մասին արհեստակցական կազմակերպության և /կամ/ արհեստակցական կազմակերպությունների միության ղեկավար մարմնի որոշումը՝ դիմումի հետ միասին, քննարկում է ճյուղային արհմիության նախագահությունը՝ հինգ աշխատանքային օրվա ընթացքում: Արհեստակցական կազմակերպությունը և /կամ/ արհեստակցական կազմակերպությունների միությունը համարվում է ճյուղային արհմիության մասնակից (անդամ)՝ այդ մասին ճյուղային արհմիության նախագահության որոշումը ընդունվելուց հետո:

Ճյուղային արհմիությանը մասնակցելու (անդամակցելու) մասին արհեստակցական կազմակերպության և /կամ/ արհեստակցական կազմակերպությունների միության ղեկավար մարմնի դիմումը մերժվելու դեպքում արհեստակցական կազմակերպութունը և /կամ/ արհեստակցական կազմակերպությունների միությունը կարող է երկրորդ անգամ դիմել երեք ամիս հետո: Դիմումը մերժելու մասին ճյուղային արհմիության նախագահության  որոշումը պետք է լինի հիմնավորված:

**Հոդված 12**

Սույն կանոնադրության պահանջները խախտելու դեպքում, ճյուղային արհմիության նախագահության որոշմամբ, մասնակից (անդամ) կազմակերպությունը կարող է զգուշացվել կամ ճյուղային արհմիության կազմից վտարվել:

**Հոդված 13**

Ճյուղային արհմիության մասնակից (անդամ) կազմակերպությունը իրավունք ունի.

1. Երաշխավորել իր մասնակիցներին (անդամներին) ճյուղային արհմիության ղեկավար մարմինների և վերստուգիչ հանձնաժողովի կազմերում:

2. ճյուղային արհմիության ղեկավար մարմինների քննարկմանը ներկայացնել փաստաթղթերի նախագծեր, առաջարկություններ, ստանալ դրանց վերաբերյալ որոշումներ:

3. Դիմել ճյուղային արհմիության ղեկավար մարմիններին իր աշխատանքային շահերի պաշտպանության միջնորդությամբ:

4. Մասնակցել ճյուղային արհմիության կողմից կնքվող համաձայնագրի նախագծերի նախապատրաստման և իրականացման աշխատանքներին:

5. Մասնակցել ճյուղային արհմիության գործունեության ծրագրերի մշակմանը:

6. Ստանալ տեղեկատվություն ճյուղային արհմիության ֆինանսատնտեսական գործունեության մասին:

**Հոդված 14**

Ճյուղային արհմիության մասնակից (անդամ) կազմակերպությունը պարտավոր է.

1. Կատարել սույն կանոնադրության պահանջները, ճյուղային արհմիության ղեկավար մարմինների որոշումները:

2. Ճյուղային արհմիությանը մուծել սահմանված ժամկետում և չափով անդամավճար, որի տոկոսաչափը սահմանվում է սույն կանոնադրությամբ:

3. Ցուցաբերել փոխադարձ համերաշխություն ճյուղային արհմիության մասնակիցների (անդամների) միջև աշխատողների աշխատանքային և սոցիալ-տնտեսական իրավունքների և շահերի պաշտպանությանն ուղղված ճյուղային արհմիության ղեկավար մարմինների կազմակերպած միջոցառումների ժամանակ:

4. Ճյուղային արհմիության մասնակցությունից (անդամակցությունից) դուրս գալու որոշման մասին գրավոր տեղյակ պահել ճյուղային արհմիության նախագահությանը:

5. Նախագահության կողմից սահմանված կարգով վիճակագրական և ֆինանսական տվյալներ ներկայացնել ճյուղային արհմիությանը:

## Գլուխ 4

## Ճյուղային արհմիության ղեկավար և վերահսկողությունն իրականացնող մարմինները

### Հոդված 15

Ճյուղային արհմիության ղեկավար մարմիններն են ճյուղային արհմիության համագումարը, ճյուղային արհմիության խորհուրդը և նախագահությունը:

### Հոդված 16

Ճյուղային արհմիության բարձրագույն մարմինը ճյուղային արհմիության համագումարն է, որը հրավիրվում է խորհրդի որոշմամբ, ոչ ուշ, քան հինգ տարին մեկ անգամ:

### Հոդված 17

Խորհրդի որոշումը ճյուղային արհմիության համագումարի հրավիրման, ներկայացուցչական նորմայի, պատվիրակների ընտրության կարգի, օրակարգի,

անցկացման տեղի  և  ժամկետի մասին ընդունվում է համագումարից մեկ ամիս առաջ:

Անհրաժեշտության դեպքում, նախագահության որոշմամբ սահմանելով ներկայացուցչական նորման, պատվիրակների ընտրության կարգը, օրակարգը, անցկացման տեղը և ժամկետը, հրավիրվում է արտահերթ համագումար քննարկելու մասնակից (անդամ) կազմակերպությունների և միությունների  աշխատողների աշխատանքային շահերին առնչվող հրատապ լուծում պահանջող հարցեր:

**Յոդված 18**

Ճյուղային արհմիության համագումարը.

1. Ընտրում է հինգ տարի ժամանակով ճյուղային արհմիության նախագահ և վերստուգիչ հանձնաժողով:

Ընտրված է համարվում ճյուղային արհմիության  այն մասնակիցը (անդամը), ով ստանում է համագումարին մասնակցած պատվիրակների ձայների կեսից ավելին: Յավասար ձայների դեպքում կատարվում է վերաքվեարկություն:

2. Լսում է հաշվետու ժամանակահատվածում խորհրդի և վերստուգիչ հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին հաշվետվությունները, ընդունում է համապատասխան որոշումներ:

3. Յաստատում է ճյուղային արհմիության կանոնադրությունը, խորհրդի, նախագահության և վերստուգիչ հանձնաժողովի կանոնակարգերը, դրանցում կատարած լրացումներն ու փոփոխությունները:

4. Յաստատում է ճյուղային արհմիության գործունեության ծրագիրը, հերթական խնդիրները, ընդունում է դիմումներ, հայտարարություններ, որոշումներ:

5. Ընդունում է որոշումներ ճյուղային արհմիության կանոնադրական փոփոխությունների և լրացումների , վերակազմակերպման և լուծարման մասին:

**Յոդված 19**

Ճյուղային արհմիության համագումարը համարվում է իրավազոր, եթե նրա աշխատանքներին մասնակցում են համագումարի ընդհանուր պատվիրակների թվի երկու երրորդից ոչ պակաս:

**Հոդված 20**

Ճյուղային արհմիության համագումարի որոշումներն համարվում են ընդունված, եթե որոշումների օգտին քվեարկում են համագումարին մասնակից պատվիրակների կեսից ավելին:

Քվեարկության կարգը (բաց կամ փակ (գաղտնի), որոշում է ճյուղային արհմիության համագումարը, այլընտրանքի դեպքում կայացվում է փակ (գաղտնի) քվեարկություն:

**Հոդված 21**

Ճյուղային արհմիության համագումարների միջև ընկած ժամանակահատվածում ճյուղային արհմիության աշխատանքները ղեկավարում է ճյուղային արհմիության խորհուրդը /այսուհետև խորհուրդ/: Այն կազմավորվում է մասնակից անդամ կազմակերպությունների նախագահներից:

Խորհրդի անդամի հրաժարականի կամ այլ դեպքերում, արհեստակցական կազմակերպության կամ արհեստակցական կազմակերպությունների միության որոշմամբ, խորհրդի կազմում պատվիրակվում է նոր մասնակից (անդամ):

**Հոդված 22**

Ճյուղային արհմիության խորհուրդը.

1. Հրավիրում է ճյուղային արհմիության համագումար, հաստատում է նրա օրակարգի նախագիծը, ներկայացուցչական նորմերը, անհրաժեշտության դեպքում ստեղծում է աշխատանքային հանձնաժողովներ:

2. Հաստատում է նախագահության և նախագահի աշխատակարգը:

3. Լսում և գնահատում է ճյուղային արհմիության նախագահի հաշվետու ժամանակաընթացքում կատարած աշխատանքի մասին հաղորդումը:

4. Ստեղծում է տնտեսական ընկերություններ, հաստատում է նրանց կանոնադրությունները:

**Հոդված 23**

Խորհրդի նիստը հրավիրում է ճյուղային արհմիության նախագահությունը` հաստատված ժամանակացույցի համաձայն, բայց ոչ ուշ, քան տարին մեկ անգամ և իրավազոր է, եթե նրա աշխատանքին մասնակցում է խորհրդի անդամների ոչ պակաս քան երկու երրորդը: Խորհրդի որոշումները համարվում են ընդունված, եթե որոշման օգտին քվեարկում են նիստին մասնակցած խորհրդի անդամների կեսից ավելին: Քվեարկության ձևը (բաց կամ փակ (գաղտնի) որոշում է խորհրդը:

**Հոդված 24**

Ճյուղային արհմիության նախագահությունը

1. Ճյուղային արհմիության խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում աշխատանքները ղեկավարում է ճյուղային արհմիության նախագահությունը, որը ընտրվում է խորհրդի կողմից` 5 տարի ժամկետով: Ճյուղային արհմիության նախագահը և տեղակալը ի պաշտոնե նախագահության անդամներ են:

2. Հաստատում է ճյուղային արհմիության նախագահի աշխատանքային պայմանագիրը, որը ճյուղային արհմիության կողմից ստորագրում է ճյուղային արհմիության համագումարի նախագահը:

3. Լսում և քննարկում է ճյուղային արհմիության մասնակից /անդամ/ արհեստակցական կազմակերպությունների, միությունների ղեկավարների հաշվետվությունը:

4. Որոշումներ է ընդունում մասնակիցներին /անդամներին/ մեթոդական, իրավական և դրամական օգնություն ցույց տալու մասին:

5. Որոշում է կայացնում արհեստակցական կազմակերպության առավել աչքի ընկած արհմիության անդամներին խրախուսելու մասին, իսկ հարկ եղած դեպքում ներկայացնում է համապատասխան մարմինների խրախուսմանը:

6. Հաստատում է ճյուղային արհմիության տարեկան բյուջեն, աշխատակազմի կառուցվացքը:

7. Որոշումներ է կայացնում ճյուղային արհմիության կազմում նոր մասնակից (անդամ) կազմակերպություն, միություն անդամագրելու, կամ անդամությունից վտարելու, առանձնացված ստորաբաժանումների ստեղծման, լուծարման մասին: Հաստատում է առանձնացված ստորաբաժանումների կանոնադրությունը:

8.Նախագահության նիստն իրավազոր է իր անդամների երկու երրորդի առկայության դեպքում, որոշումներն ընդունվում են ձայների պարզ մեծամասնությամբ:

9. Նախագահության անդամի հրաժարականի կամ այլ դեպքերում խորհրդի որոշմամբ ընտրվում է նախագահության նոր անդամ:

10. Ճյուղային արհմիության նախագահի ներկայացմամբ պատվիրակում է կամ հետ կանչում ճյուղային արհմիության ներկայացուցիչներին Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի և Արհմիությունների միջազգային ֆեդերացիայի համագումարներում, խորհրդներում, հանձնաժողովների կազմերում, տարբեր հիմնադրամներում:

**Հոդված 25**

Ճյուղային արհմիության նախագահը համարվում է խորհրդի և նախագահության անդամ ի պաշտոնե և ղեկավարում է խորհրդի և նախագահության աշխատանքները:

**Հոդված 26**

1. ճյուղային արհմիության նախագահը և նախագահի հանձնարարությամբ տեղակալը ներկայացնում են ճյուղային արհմիությունը պետական իշխանության մարմիններում, միջազգային արհմիութենական և հասարակական կազմակերպություններում, կազմակերպում են ճյուղային արհմիության համագումարի որոշումների կենսագործումը, ղեկավարում են խորհրդի, նախագահության և ճյուղային արհմիության աշխատակազմի աշխատանքները, ընդունում են մասնակիցների (անդամների) դիմումները, աշխատողների աշխատանքային շահերի հետ կապված տարբեր հարցերով բանակցում են գործատուի հետ:

2. Ճյուղային արհմիության նախագահը ձևավորում է ճյուղային արհմիության աշխատակազմը, իրականացնում է աշխատակազմի ընդհանուր ղեկավարումը, հաստատում է աշխատակազմի աշխատակարգը, ներքին աշխատանքային կարգապահական կանոնները, աշխատողների աշխատավարձի չափը սահմանում է համապատասխան նախագահության կողմից հաստատված տարեկան բյուջեի, աշխատանքի է ընդունում կամ աշխատանքից ազատում աշխատողներին՝ օրենքով սահմանված կարգով: Ստորագրում է համագումարի, խորհրդի, նախագահության որոշումները :

Ճյուղային արհմիության նախագահը համագումարի կողմից տրված իրավասությունների շրջանակներում տնօրինում է ճյուղային միության գույքը և դրամական միջոցները, հանդիսանում է ճյուղային միության վարկի կարգադրիչ, կնքում է պայմանագրեր:

**Հոդված 27**

Ճյուղային արհմիության նախագահի բացակայության դեպքում վերջինիս լիազորությունները իրականացնում է ճյուղային արհմիության նախագահի տեղակալը, իսկ տեղակալ չլինելու դեպքում, նախագահին փոխարինում է նախագահության անդամներից որևէ մեկը՝ նախագահության որոշմամբ:

**Հոդված 28**

Արհմիութենական աշխատանքները համախմբելու, կատարելագործելու, աշխատողների աշխատանքային, սոցիալական շահերը, իրավունքները ներկայացնելու և պաշտպանելու, ինչպես նաև արհեստակցական միությունների, արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միության աշխատանքային շահերը պետական մարմիններում միասնական ձևով պաշպանելու, վերջիններիս մեթոդական և գործնական օգնություն ցույց տալու համար ճյուղային արհմիությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է դառնալ արհեստակցական կազմակերպությունների հանրապետական միության հիմնադիր և անդամակցել նրան:

**Գլուխ 5**

**Ճյուղային արհմիության վերստուգիչ հանձնաժողովը**

**Հոդված 29**

1. Ճյուղային արհմիության ֆինանսատնտեսական գործունեությունը և բյուջեի կատարումը վերահսկելու, ճյուղային արհմիության համագումարի, խորհրդի և նախագահության որոշումների կատարումը վերահսկելու նպատակով ճյուղային արհմիության համագումարը արհեստակցական կազմակերպությանների և միությունների մասնակիցներից (անդամներից) ընտրում է վերստուգիչ հանձնաժողով, հաստատում է նրա աշխատակարգը:

2. Խորհրդի անդամը չի կարող լինել վերստուգիչ հանձնաժողովի անդամ:

3. Ճուղային արհմիության վերստուգիչ հանձնաժողովը անդրանիկ նիստում իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ, հաստատում է հանձնաժողովի գործունեության ծրագիրը:

4. Վերստուգիչ հանձնաժողովը իրավունք ունի խորհրդից և նախագահությունից պահանջելու վերջիններիս գործունեությանը վերաբերող տվյալներ, տեղեկություններ:

5. Վերստուգիչ հանձնաժողովը հաշվետու է ճյուղային արհմիության համագումարին: Ընթացիկ վերստուգումների արդյունքների մասին վերստուգիչ հանձնաժողովը տեղեկություն է տալիս նախագահությանը և խորհրդին:

6. Վերստուգիչ հանձնաժողովի աշխատակարգային գործունեությունը ապահովելու անհրաժեշտ ծախսերը կատարվում են ճյուղային արհմիության միջոցների հաշվին:

7. Վերստուգիչ հանձնաժողովի նիստն իրավազոր է իր անդամների երկու երրորդի առկայության դեպքում, որոշումները համարվում են ընդունված եթե կողմ են քվեարկել ներկաների կեսից ավելին:

## Գլուխ 6

## Ճյուղային արհմիության սեփականությունը և ֆինանսատնտեսական գործունեությունը

### Հոդված 30

Ճյուղային արհմիության սեփականությունը գոյանում է ճյուղային արհմիության մասնակից (անդամ) կազմակերպությունների անդամավճարներից, ֆիզիկական և իրավաբանական անձանց կամավոր ներդրումներից, նվիրատվություններից, գործատուների՝ Հայաստանի Հանրապետության

օրենսդրությամբ սահմանված կարգով հատկացումներից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

**Հոդված 31**

Ճյուղային արհմիության սեփականություն կարող են հանդիսանալ շենքեր, առողջարանային, հանգստի, տուրիստական, մարզական, մշակութային հիմնարկներ, ինչպես նաև այլ ունեցվածք, որոնք ապահովում են իրականացնելու ճյուղային արհմիության կանոնադրական պահանջները:

**Հոդված 32**

Ճյուղային արհմիության մասնակից (անդամ) կազմակերպությունների և միությունների ամենամսյա անդամավճարի չափը սահմանվում է (անդամ) կազմակերպությունների, միությունների ամենամսյա անդամավճարի մուտքի 20 տոկոսի չափով: Անդամավճարը մուծվում է կանխիկ և (կամ) անկանխիկ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 33**

Ճյուղային արհմիության սեփականությունը չի բաժանվում ճյուղային արհմիության մասնակից (անդամ) կազմակերպություններին, այն օգտագործվում է խորհրդի որոշմամբ, ճյուղային արհմիության կանոնադրության պահանջներին համապատասխան:

**Հոդված 34**

Ճյուղային արհմիության տարեկան բյուջեի կատարման մասին հաշվետվությունը վերստուգիչ հանձնաժողովի կողմից հաստատված վերստուգումների ակտի հետ միասին քննարկվում է նախագահության նիստում և հաստատվում է ճյուղային արհմիության խորհրդում օրացուցային տարվա ավարտից հետո:

Ճյուղային արհմիությունը իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իր գույքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

**Հոդված 35**

Ճյուղային արհմիությունը կարող է ունենալ բանկային հաշիվներ, այդ թվում՝ արտարժութային:

**Հոդված 36**

Ճյուղային արհմիության կազմից մասնակից (անդամ) կազմակերպության դուրս գալու դեպքում նրան չի վերադարձվում նրա կողմից որպես անդամավճար մուծված գումարը:

**Հոդված 37**

Ճյուղային արհմիության գույքի օտարումը կատարվում է խորհրդի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## Գլուխ 7

## Արհեստակցական կազմակերպության կապերը

**Հոդված 38**

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և սույն կանոնադրության պահանջներին համապատասխան ճյուղային արհմիությունը կարող է համաձայնագրեր կնքել և համագործակցել տարբեր իրավաբանական և ֆիզիկական

անձանց հետ, պայմանագրային հիմունքով համագործակցել արհմիության միջազգային միավորումների հետ:

**Գլուխ 8**

**Ճյուղային արհմիության իրավունակությունը: Ճյուղային արհմիության վերակազմակերպումը և լուծարումը**

**Հոդված 39**

Ճյուղային արհմիությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ պետական գրանցման պահից:

Ճյուղային արհմիությունը ունի իրավաբանական անձի համար սահմանված բոլոր իրավունքները և կրում է համապատասխան պարտավորություններ:

Ճյուղային արհմիությունը կարող է ունենալ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով իր անվանումով կնիք, դրոշմ, անվանաթերթիկ, խորհրդանիշ:

**Հոդված 40**

Ճյուղային արհմիության վերակազմակերպումը (միաձուլումը, միացումը, բաժանումը, առանձնացումը) իրականացվում է ճյուղային արհմիության համագումարի որոշմամբ՝ օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ճյուղային արհմիության վերակազմավորում չի թույլատրվում:

**Հոդված 41**

Ճյուղային արհմիության լուծարումը տեղի է ունենում օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով և դեպքերում:

**Հոդված 42**

Լուծարման մասին որոշում ընդունելուց հետո ճյուղային արհմիության համագումարը ընտրում է լուծարման հանձնաժողով, սահմանում դրա կարգը, ժամկետները և օրենքով սահմանված կարգով պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքը օգտագործում է ճյուղային արհմիության, անդամ կազմակերպությունների, միությունների նպատակների իրականացման համար, իսկ եթե դա հնարավոր չէ՝ փոխանցում է պետական բյուջե:

Ճյուղային արհմիությունը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը դադարած, այդ մասին պետական գրանցամատյանում գրառման պահից:

Սույն  կանոնադրությունը կազմված է  2008թ.  դեկտեմբերի 26-ին

Սույն կանոնադրության փոփոխությունները գրանցված են 2018թ. փետրվարի 23-ին